# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝

# N ԲԸԱԾՁԲ-10/8-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

# ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ք. Երևան** **20.11.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունն, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արտաշատ Ջրշին» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ա. Վահանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կապալառու, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք հիմք ընդունելով 18.12.2012թ. կնքված ՀՀ ՊՆ կարիքների համար շինարարական աշխատանքների գնման № ԲԸԱԾՁԲ-10/8-1 Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով այն փաստը, որ Կապալառուն Պայմանագրով (դրան կից 12.02.2014թ. կնքված N 2 Համաձայնագրով) նախատեսված աշխատանքները կատարել և ավարտել է՝ ըստ սահմանված գնման ժամանակացույցի, և շինարարական օբյեկտը հանձնվել է շահագործման, սակայն 146 265 դրամ ծավալի աշխատանքների անհրաժեշտությունը վերացել է (գնման պահանջը դադարել է), Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին այդ մասով մասնակի լուծել Պայմանագիրը (դրան կից 12.02.2014թ. կնքված N 2 Համաձայնագիրը), ընդ որում, 146 265 դրամ ֆինանսական միջոցները նվազեցնելու վերաբերյալ Կողմերի միջև համաձայնությունը ձեռք է բերվել, իսկ նվազեցման գործընթացը սկսվել է դեռևս 2014թ. 2-րդ եռամսյակում:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արտաշատ Ջրշին» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/h 900011117034 | Հ/h 1150000359780100 |
| ՀՎՀՀ 02703824 | ՀՎՀՀ 04211963 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-<br>ՆՏԱ դեպարտամենտի պետ | Տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Ա. ՎԱՀԱՆՅԱՆ |

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 2012թ-ի դեկտեմբերի 18-ին կնքված N ԲԸԱՇՁԲ-10/8-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի նոյեմբերի 20-ին մասնակի լուծման վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Մասնակի լուծման պատճառ:*** Պատվիրատուի մոտ վերացել է որոշ աշխատանքների գնման պահանջը, իսկ ֆինանսական միջոցները նվազեցվել են:

***Մասնակի լուծման նկարագրություն***: Հաշվի առնելով այն փաստը, որ Կապալառուն Պայմանագրով (դրան կից 12.02.2014թ. կնքված N 2 Համաձայնագրով) նախատեսված աշխատանքները կատարել և ավարտել է՝ ըստ սահմանված գնման ժամանակացույցի, և շինարարական օբյեկտը հանձնվել է շահագործման, սակայն 146 265 դրամ ծավալի աշխատանքների անհրաժեշտությունը վերացել է (գնման պահանջը դադարել է), Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին այդ մասով մասնակի լուծել Պայմանագիրը (դրան կից 12.02.2014թ. կնքված N 2 Համաձայնագիրը), ընդ որում, 146 265 դրամ ֆինանսական միջոցները նվազեցնելու վերաբերյալ Կողմերի միջև համաձայնությունը ձեռք է բերվել, իսկ նվազեցման գործընթացը սկսվել է դեռևս 2014թ. 2-րդ եռամսյակում:

***Մասնակի լուծման հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.3 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

**Հեռախոս՝ <u>010-29-44-99:</u>**

**Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**